



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 1228-Ա/2

«30» հուլիսի, 2021 թ.

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ
ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ
ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի պաշտոնակատարի 2021 թվականի մայիսի 26-ի N 845-Ա/2 հրամանը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի պաշտոնակատարի 2021 թվականի հուլիսի 14-ի N 1132-Ա/2 հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2021 թվականի հուլիսի 27-ին կայացած նիստի արձանագրությունը, ինչպես նաև ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի աջակցության մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոջանին՝ ապահովել գիտական թեմաների ֆինանսավորումը սկսած 2021 թվականի օգոստոսից:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոջանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ
/պաշտոնակատար/

ՑԱՆԿ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ

Հ/հ	Թեմայի ղեկավար	Թեմայի վերնագիր	Կազմակերպություն
1	Ահարոնյան Ահարոն Կամոյի	Ռադիոհաճախականային ճառագայթում ունեցող անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) ուղղորդման և տեղորոշման համակարգի նախագծում, պատրաստում և փորձարկում	ՀՀ/ՌԴ ԿԳՄՍՆ «Հայ-ռուսական համալսարան» բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատություն
2	Արզումանյան Ավետիք Արտավազդի	Բազալտային թելքերի և ածխածնային նանոկառուցվածքների հավելումներով նոր սերնդի կոմպոզիտային բետոնե պաշտպանական կոնստրուկցիաների նախագծում և պատրաստում	ՀՀ ԿԳՄՍՆ «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ
3	Բաղիյան Արամ Հայկազի	Հրթիռների նախագծման համար արտաքին ձգաբանական հաշվարկների ծրագրային ապահովման մշակում	«Իմպրովիզ» ՍՊԸ
4	Գրիգորյան Սեդրակ Վարդանի	Ռազմադաշտում արդյունավետ ինքնուրույն որոշումներ կայացնող համակարգի մշակում	ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ
5	Դարբինյան Հայկանուշ Գուրգենի	Նավիգացիոն տեղեկատվության ինտեգրմամբ ուղղաձիգ վերթող և վայրէջքով անօդաչու թռչող սարքերի ինտելեկտուալ կառավարման մեթոդների մշակում	ՀՀ ԿԳՄՍՆ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ

6	Երանոսյան Մկրտիչ Ալեքսանի	Միջին և երկարալիքային ինֆրակարմիր տիրույթների բարձր ջերմաստիճանային ֆոտոդետեկտորների մշակում և պատրաստում	ՀՀ ԳԱԱ «Ա.Բ. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ
7	Զաքարյան Նարեկ Բենիկի	Կրկնակի նշանակության փոքրաչափ նոր վիրահատական ռոբոտի նախագծումը, հետազոտումը, փորձանմուշների ստեղծումը և փորձարկումը	ՀՀ ԿԳՄՄՆ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
8	Կիրակոսյան Գագիկ Հրաչիկի	Սահմանը հսկող ավտոնոմ սնուցումով ռոբոտի մշակում և ներդրում արտադրությունում	ՀՀ ԿԳՄՄՆ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
9	Մարգարյան Նարեկ Բաբիկի	Գրաֆենային հիմքով ինֆրակարմիր ճառագայթման կլանիչ թաղանթներ	ՀՀ ԿԳՄՄՆ «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ
10	Մարկոսյան Մհեր Վարդգեսի	Շրջաթիռ եղանակով դրոնի միջոցով մետրային տիրույթի ռադարների ուղղորդվածության հատկությունները թեստավորելու համար սարքավորման համալիր	«Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ
11	Մարուքյան Հրաչյա Հովհաննեսի	«Արևի-կոյր» ուլտրամանուշակագույն ուղղորոշիչի փորձնական նմուշի ստեղծում	ՀՀ ԿԳՄՄՆ «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ
12	Ուլիկյան Ազատուհի Թորոսի	Արհեստական բանականությամբ ղեկավարվող բիոնիկ վերին վերջույթի և էկզոկմախքի ադապտիվ բազմաչափ կառավարման համակարգերի մշակում	ՀՀ ԿԳՄՄՆ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ